

Համերգ-հանդիպում Ռոբերտ Ամիրխանյանի հետ



«Հայի աչքեր»,
«Երագի իմ երկիր
հայրենի», «Կարմիր
ծաղիկ մը գարունի»,
«Պույ-պույ
մուկիկը»...
Թամանյանական
մասնաշենքի մեծ
դահլիճն էր երգում
Ռոբերտ
Ամիրխանյանի հետ:
Հայաստանի
ազգային
գրադարանում

համերգ-հանդիպում էր կոմպոզիտորի հետ՝ ծննդյան 80-ամյակի առթիվ: Հին ու նոր, լաված ու չլաված երգերի, հայտնի մեղեդիների ամիրխանյանական կատարումներն ուղեկցվեցին երաժշտության, ներշնչանքի, կյանքի մասին մտերմիկ զրույցով. «Երաժշտությունն այն է, ինչն իմ ծնունդից եկել է ինձ հետ, ես դրանով զբաղվում եմ առանց մտածելու, թե դա ինչ է: Երաժշտությունը շատ մեծ պատասխանն է մեր կյանքի, անսպասելի պատասխանը: ...Իմ կյանքն էլ անբաժան է երաժշտությունից... Իմ երգը հոգու ձայնը լսելի դարձնելու համար է»:



Մաեստրոն խոստովանեց խիզախել է անձամբ կատարել իր ստեղծագործությունները. Ազգային ջերմ, ինտելեկտուալ մթնոլորտն էլ նպաստում է դրան: Ազգային գրադարանի բեմից նորովի հնչեցին Մեծարենցի, Չարենցի, Վահան Թեքեյանի, Վահագն Դավթյանի, Ալիսիա Կիրակոսյանի, Սարմենի, Մարո Մարգարյանի խոսքերով գրված երգերը, հայտնի

մուլտֆիլմերում հնչող երգեր, «Գարուն» գողտրիկ մեղեդին և շատ այլ ստեղծագործություններ...



Ստեղծագործական ներշնչանքի մասին խոսելիս Ռոբերտ Ամիրխանյանը նշեց, որ իրեն ստեղծագործելու է մղում ամեն ինչ, ցանկացած բան կարող է ներշնչանքի աղբյուր դառնալ: «Հայի աչքեր» երգի ստեղծման առիթն էլ նման մի դիպված է եղել. կոպոզիտորը ձեռքն է առել

Սարմենի բանաստեղծությունների ժողովածուն, ու հենց «Հայի աչքեր»-ի էջն է բացվել: Չլիներ դա, չէր ծնվի այդ հանրահայտ երգը: Իր կյանքի ու ստեղծագործական ուղու մասին նման շատ ուշագրավ պատմություններ արեց մատուցողն՝ դրանք համեմելով իր անսպառ հումորով:

Նոր երգերի պրեմերայից բացի Ռոբերտ Ամիրխանյանն Ազգային գրադարանին նվիրեց իր երգերի ժողովածուները: Ազգային գրադարանի տնօրեն Հարչյա Սարիբեկյանն էլ կոմպոզիտորին նվիրեց գրադարանի խորհրդանիշ «Ուրբաթագրքի» ֆաքսիմիլե օրինակը:

Համերգային ծրագրից հետո Ռոբերտ Ամիրխանյանը, ծանոթանալով թամանյանական մասնաշենքի փոքր ցուցասրահում ներկայացված՝ իրեն նվիրված գրքերի, թերթերի, ամսագրերի եւ ձեռագիր նոտաների ցուցադրությունը, նշեց, որ շատ հողվածներ ու նյութեր անակնկալ էին իր համար:

«Սա միայն սկիզբն է մեր համագործակցության եւ վստահաբար շարունակություն է ունենալու», - հրաժեշտից առաջ խոստացավ մատուցողն:

